Հավելված 5

«ԷԱՃԱՊՁԲ ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/15 »* ծածկագրով

Էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/15-1

ք. Երևան ____/_____/2022թ.

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ »-ը ի դեմս Հովհաննես Մովսիսյան ի, որը գործում է « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ »-ը, ի դեմս տնօրեն Սերգեյ Աղագումյան ի, որը գործում է « Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։ Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով։

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից

պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ձնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին

հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը։

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները։

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը։

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները։

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը։

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով։

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում։

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք։

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր։

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը։

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում

տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը։

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը։

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին։

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 8607840.00 AMD(ութ միլիոն վեց հարյուր յոթ հազար ութ հարյուր քառասուն դրամ) ՀՀ դրամ , ներառյալ ԱԱՀ-ն։[629][1]

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը։

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը։

730[2]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով։ Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին։ Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային

օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

-

4. **ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ---- օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

8 31[3]

5. **ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով

Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով:[9] [3][4]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով։

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց։

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը։ Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին։

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը։

__[5]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության։ Պայմանագրից ծագած պահանջի

իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության։

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար։ Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է։

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում։

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը։

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման։

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

11[6]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման

ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են

պայմանագրի անբաժանելի մասը։

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը։

—

13[8]

10. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ	**Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ**
ք.Երևան, Նորք, Գ. Հովսեփյան փ.26	**ք. Երևան, 0009, Աբովյան փ. 29շ. թիվ 3 տարածք**
Արդշինբանկ ՓԲԸ	**ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ**
2470102796740000	**25000-10152710100**
01540062	**01570457**
----------	**----------**
/ստորագրություն/	**/ստորագրություն/**
Կ.Տ	**Կ.Տ**

Digitally signed by MOVSISYAN HOVHANNES
2714920608
Date: 2022.03.14 15:47:51 AMT

Digitally signed by AGHAGUMYAN SERGEY
2514800153
Date: 2022.03.14 11:12:46 AMT

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ։

[1]29 6 *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[2]30 7 *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[3]31 8 *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

[4]9 *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[5]10 *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[6]11 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[7]12 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

[8]13 *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
____/_____/2022թ. կնքված
ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/15 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, մակնիշ, ֆիրմայի անվանում*	տեխնիկական բնութագիրը
2	30234660/1	Flash Կուտակիչ	Bar Plus, Samsung group, MUF-256BE3/AM, Samsung	Ֆլեշ Հիշողություն 256Gb USB3.1 Միակցիչի տեսակը USB TYPE-A, Ընթերցանության արագություն մինչև 400 Մբ/վ, Գույն Շամպայն Արծաթագույն, Նորարար V-NAND տեխնոլոգիա՝ կարդալու/գրելու բարելավված կատարողականությամբ, Մետաղյա իրանով Կցված է 2486237d.rar
3	30237200/2	KVM Extender	Basicolor, ARX Tech, ARX1120, ARX Tech	Basicolor HDMI KVM USB Extender with PoC Over Cat5/Cat5e/Cat6/Cat6e HDMI to RJ45 Աջակցություն 1080p Video Lossless No Latency, 80m 262ft HDMI USB հաղորդիչ և ընդունիչ Կցված է 10a1da34.rar

4	30237200/3	KVM Սվիթչ	CKLau, CKLAU TECHNOLOGIES INC., CKLau-64H2ua, CKLau	KVM HDMI USB Սվիթչ 1 HDMI KVM սվիտչ + 4 KVM մալուխ + 1 DC 5V 2A սնուցման ադապտեր + 1 մեխանիկական + 1 մետաղալար հեռակառավարման կոճակի անջատիչ 4 պորտ KVM USB HDMI սվիտչ. 4 համակարգիչ, որոնք կիսում են ստեղնաշարի և մկնիկի մեկ հավաքածու, 1 մոնիտոր և 1 USB 2.0 ծայրամասային սարք: Աջակցություն անլար/լարային ստեղնաշարի մկնիկին, HDMI Monitor Switch: Պատկերի մշակման և փոխանցման գերազանց որակ:. Առավելագույն թույլտվություն մինչև 4096x2160@60Hz 4:4:4, համատեղելի 3840x2160@60Hz, 1080P և ավելի ցածր: DC5V 2A հոսանքի ադապտերով, Ապրանքի Նյութը՝ Մետաղ Աջակցում է HDMI 2.0, HDCP 2.2, EDID, HDR 10: CKLau KVM Switch HDMI 4 Port USB Hub Կցված է 77c017b4.rar
8	30232480/3	Արտաքին կոշտ սկավառակ 2	ADATA, ADATA Technology, AHD710P-4TU31-CBK, ADATA	Տարողությունը - 4TB, IP68, Հարվածակայուն, Ջրակայուն, Փոշեկայուն, G հարվածի թրթռման սենսոր Գույն - Դեղին / Սև / Կապույտ / Կարմիր Չափերը (L x W x H) 133.3 x 98.5 x 26.7 մմ Քաշը՝ 390գ, դիմացկուն եռաշերտ իրան, Ինտերֆեյս - USB 3.2 Gen1 (հետընթաց համատեղելի USB 2.0-ի հետ) Իրանը - Պլաստիկ, Աշխատանքային ջերմաստիճանը 5–50°C Գործող լարումը - DC 5V, 900mAC Աքսեսուարներ - USB 3.2 Gen1 մալուխ Կցված է 01edf096.rar
9	30232480/4	Արտաքին կոշտ սկավառակ 3	ADATA, ADATA Technology, AHD710P-2TU31-CBK, ADATA	Տարողությունը - 2TB, IP68, Հարվածակայուն, Ջրակայուն, Փոշեկայուն, G հարվածի թրթռման սենսոր Գույն - Սև. Չափերը (L x W x H) 133.3 x 98.5 x 26.7 մմ Քաշը՝ 390գ, դիմացկուն եռաշերտ իրան, Ինտերֆեյս - USB 3.2 Gen1 (հետընթաց համատեղելի USB 2.0-ի հետ) Իրանը - Պլաստիկ, Աշխատանքային ջերմաստիճանը 5–50°C Գործող լարումը - DC 5V, 900mAC Աքսեսուարներ - USB 3.2 Gen1 մալուխ; Արագ մեկնարկի ուղեցույց Երաշխիք - 3 տարի Կցված է d86a1ad2.rar
11	30192320/	Ժապավեն	Magicard,	Magicard MA300YMCKO Black & Tri-Color Ink Ribbon Կցված է

	1		Magicard Ltd, MA300YMCKO, Magicard	2683dabd.rar
14	30232231/2	Կոշտ սկավառակ 2	Exos 7E8, Seagate Technology, ST4000NM002A, Seagate	Տարողությունը 4TB, Խոնավության ցուցիչ, SuperParity, Հալոգեն, PowerChoice™ տեխնոլոգիա, քեշ 256 Մբ, թրթռում, չաշխատող՝ 10 Հg-ից մինչև 500 Հg (Grms) 5, MTBF 2,000,000 ժամ, հուսալիության վարկանիշ @ Full 24×7 Operation (AFR) 0,44%, Չվերականգնվող ընթերցման սխալներ մեկ ընթերցված բիթում, առավելագույնը 1 հատված 10E15-ի համար, Միացման ժամեր 8760: Բայթ յուրաքանչյուր հատվածի համար 512, Պտտման արագություն 7200 RPM, Ինտերֆեյսի մուտքի արագություն (Գբ/վ) 6.0, 3.0, 1.5: Կայուն փոխանցման առավելագույն արագություն 226 ՄԲ/վ, միջին ուշացում (ms) 4.16, Պտտվող թրթռում @ 1500 Հg (rad/s²) 12.5, Պարապ միջին (Վտ) 5,40 Վտ, Միջին գործառնական հզորություն 10,89 Վտ, Էլեկտրաէներգիայի մատակարարման պահանջներ +12 Վ և +5 Վ, ջերմաստիճան, աշխատանքային (°C) 5°C – 60°C, Շոկ, գործող 70/40Gs, Շոկ, Չաշխատող, 1ms/2ms (Gs) 150/300, Բարձրություն (մմ/դյույմ) 26,1 մմ/1,028 դյույմ, Լայնություն (մմ/դյույմ, առավելագույն) 101,85 մմ/4,010 դյույմ Խորություն (մմ/դյույմ, առավելագույնը 147,0 մմ/5,787 դյույմ, Քաշ (գ/լբ) 649 գ/1,5 ֆունտ Հստակեցում 512n SATA Enterprise 3.5 Seagate Exos 4TB Internal Hard Կցված է 1ac3461c.rar
15	30232231/3	Կոշտ սկավառակ 3	Barracuda, Seagate Technology, ST2000DM008, Seagate	2 Տբ SATA 6 Գբ/վ ինտերֆեյս: Աջակցում ինքնագաղտնագրող սկավառակ (SED) ապարատային հիմնված տվյալներ անվտանգություն և մատուցեք ակնթարթային անվտանգ ջնջում: Բայթ յուրաքանչյուր հատվածի համար 4096, Գլուխներ/Սկավառակներ 2/1, Աջակցվում է SATA փոխանցման տեմպերը (Գբ/վ) 6.0/3.0/1.5, մաքս. Կայուն փոխանցման

				տոկոսադրույք OD (ՄԲ/վ) 220 ՄԲ/վ, Քեշ, բազմասեգմենտացված (MB) 256, Բեռնում/բեռնաթափման ցիկլեր 300,000, Չվերականգնվող ընթերցման սխալներ մեկ ընթերցված բիթում, Առավելագույնը 1 10E14-ի համար, Տարեկան միացման ժամ (24×7) 2400, ծանրաբեռնվածության մակարդակի սահմանաչափ (ՏԲ/Տարի) 55 Գործարկման հզորություն (A) 2.0, Գործառնական ռեժիմ, Տիպիկ (W) 4.3, Պարապ միջին (Վտ) 3.0 Վտ, Սպասման ռեժիմ Ռեժիմ/Քնի ռեժիմ, Տիպիկ (Վտ) 0.3/0.3, Voltage Tolerance, Inc. Աղմուկ (5V) ±5% Voltage Tolerance, Inc. աղմուկ (12V) ±10%, Գործող (միջավայր, min) 0°C, Գործող (շարժիչի պատյան, առավելագույնը) 60°C, Չաշխատող (միջավայր), 40°C – 70°C, Հալոգեն ազատ, RoHS համապատասխանություն, բարձրություն (մմ) 20,20 մմ, Լայնություն (մմ/դյույմ) 101,85 մմ, Խորություն (մմ,) 146,99 մմ, Քաշ (գ/լբ) 415գ Կցված է da3a2057.rar
16	30232231/4	Կոշտ սկավառակ 4	Exos 7E8, Seagate Technology, ST8000NM001A, Seagate	3.5 8ՏԲ 7200 RPM SAS 12Gb/s 256MB Cache ներքին կոշտ սկավառակ Կցված է cbe4aada.rar
19	30232231/7	Կոշտ սկավառակների հարակցման կայան 2	ACASIS, ACASIS Ltd., NVMeDock2, ACASIS	NVMe Dock M.2 USB-ի համար USB 3.2 աջակցություն, 10 Գբիտ/վ կայուն և արդյունավետ տվյալների փոխանցում: Հետընթաց համատեղելի USB 3.1 և USB 3.0-ի հետ համապատասխան արագության սահմանաչափերով: Մինչև 1000 ՄԲ/վրկ, Plug and Play: Գործիքներից ազատ՝ SSD-ը կարելի է արագ տեղադրել և հեռացնել առանց որևէ գործիքի, 49 * 49 * 12 մմ չափսերով քաշը 45 գ, Համատեղելիություն m.2-ի ընդհանուր չափերը համատեղելի են SATA-ի և nvme-ի հետ, չափերը՝ 2242 / 2242 / 2260 / 2280 և կայծակնային 3: Կցված է 627d94c5.rar
21	30237411/1	Համակարգչային	Logitech, Logitech International S.A.,	Ստեղնաշար Բարձրությունը՝ 6,10 դյույմ (155 մմ) Լայնությունը՝ 17,72 դյույմ (450 մմ) Խորությունը՝ 0,93 դյույմ (23,5 մմ) Քաշը՝

		մկնիկ և ս տեղնաշա ր	MK120, Logitech	19,4 ունցիա (550 գ) Խորություն՝ 59,06 դյույմ (150 սմ) Մկնիկ Բարձրությունը՝ 4,45 դյույմ (113 մմ) Լայնությունը՝ 2,44 դյույմ (62 մմ) Խորությունը՝ 1,50 դյույմ (38 մմ) Քաշը՝ 3,17 ունցիա (90 գ) Խորություն՝ 70,87 դյույմ (180 սմ) ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ Windows 10,11 կամ ավելի ուշ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ Ստեղնաշար Հեղուկի ներհոսքի դիմացկուն դիզայն Կարգավորելի ստեղնաշարի բարձրություն 10-Բանալի համարների պահոց Caps lock ցուցիչ լույս Num lock ցուցիչ լույս Մինչև 10 միլիոն ստեղնահարում (առանց թվերի կողպման բանալին) Բանալի տեսակ՝ խորը պրոֆիլ Մկնիկ 1000 dpi Սենսորային տեխնոլոգիա՝ օպտիկական հետևում Կոճակների քանակը՝ 3 (ձախ/աջ սեղմում, միջին սեղմում) Ոլորում՝ տող առ տող Scroll Wheel: Այո, օպտիկական -Logitech Desktop MK120 Երկարակյաց, Հարմարավետ, USB մկնիկ և ստեղնաշար Կցված է bb5871e9.rar
23	32341120/1	Համակարգչի ակաջ ակալ 1	Edifier, Beijing Edifier Technology Company, Ltd., K815 USB, Edifier	Ականջակալ միկրոֆոնով 40 մմ NdFeb : Հաճախականություն - 20 Հg ~ 20 կՀg Դիմադրություն - 40Ω Միակցիչի տեսակը - USB-A վարդակից SPL - 91+/-3dB Մալուխի երկարությունը՝ 2,8մ Խոսափողի ուղղություն - Մեկ կետ Զգայունություն -42dB+/-3dB, 120 աստիճան կարգավորվող խոսափող Ճշգրիտ ճշգրտված ձայնային ճնշման մակարդակները: Խոշոր սև ձայնային կծիկի դիֆրագմային միավոր Պաշտպանված մետաղալարեր մեծ մագնիսական օղակներով 120° կարգավորվող բարձր զգայունության աղմուկը չեղարկող խոսափողներ Կարգավորվող ականջալակներ՝ հարմարավետ կրելու համար Կցված է 0e7d4c70.rar
24	32341120/2	Համակարգչի ակաջ ակալ 2	Edifier, Beijing Edifier Technology Company, Ltd.,	Ականջակալ միկրոֆոնով 40 մմ NdFeb : Հաճախականություն - 20 Հg ~ 20 կՀg Դիմադրություն - 40Ω Միակցիչի տեսակը - 3.5 jack, SPL - 91+/-3dB Մալուխի երկարությունը՝ 2,8մ Խոսափողի

			K815 SINGLE PLUG, Edifier	ուղղություն - Մեկ կետ Զգայունություն -42dB+/-3dB 120 աստիճան կարգավորվող խոսափող Ճշգրիտ ճշգրտված ձայնային ճնշման մակարդակները Խոշոր սև ձայնային կծիկի դիֆրագմային միավոր Պաշտպանված մետաղալարեր մեծ մագնիսական օղակներով 120° կարգավորվող բարձր զգայունության աղմուկը չեղարկող խոսափողներ Կարգավորվող ականջակալներ՝ հարմարավետ կրելու համար Կցված է 87ac844a.rar
25	32341110/1	Համակարգչի Բարձրախոս	Edifier, Beijing Edifier Technology Company, Ltd., R1024BT, Edifier	Ստերեո Բարձրախոսներ, min. 42W, MDF փայտ, ազդանշան-աղմուկ հարաբերակցություն≥85dBA, Bluetooth 5.0, մուտքեր՝ գիծ L/R, AUX, 4" միջնակարգ վուֆեր: Դինամիկ տիրույթի կառավարում, հաճախականություն 68Hz-20KHz Կցված է 1a857e57.rar
27	30237112/1	Հոսանքի Սնուցման բլոկ	Prime, Sea Sonic Electronics Co., Ltd.,, GX-750, Seasonic	Cybenetics աղմուկի մակարդակի TBA Form Factor Intel ATX 12 V Չափերը 140 մմ (L) x 150 մմ (Վ) x 86 մմ (Բ) Օդափոխիչի չափը 135 մմ Fan Control Պրեմիում Hybrid Fan Control Fan կրող հեղուկ դինամիկ առանցքակալ Կյանքի տևողությունը 50000 ժամ 40 °C ջերմաստիճանում, 15% - 65% RH Մալուխի տեղեկատվության մոդուլյարություն Լիովին մոդուլային Մալուխի տեսակը Հարթ սև մալուխներ Էլեկտրական առանձնահատկություններ Գործառնական ջերմաստիճանը 0 - 50 °C (100% -ից մինչև 80% 40 °C-ից մինչև 50 °C) MTBF @ 25 °C, բացառությամբ. օդափոխիչ 150,000 ժամ AC մուտքագրման ամբողջ տիրույթ Պաշտպանություն OPP, OVP, UVP, OCP, OTP, SCP Անվտանգություն և շրջակա միջավայրի անվտանգություն և EMC cTUVus, TUV, CB, CCC, BSMI, EAC, CE Էկոլոգիական համապատասխանություն Energy Star, RoHS, WEEE, ErP Լոտ 6, REACH Երաշխիք 12 տարի AC մուտքային լարումը՝ 100 Վ - 240 Վ, հոսանք՝ 10 - 5 Ա, հաճախականությունը՝ 50 Հց - 60 Հց DC Արդյունք Rail +3.3 V +5

				V +12 V -12 V +5 VSB Առավելագույն հզորությունը 20 A 20 A 62 A 0.3 A 3 A, Ընդհանուր շարունակական հզորություն 750 Վտ Մաբ մալուխներ (24/20 կապում) 610 մմ, 2x պրոցեսոր (8/4 կապում) 650 մմ 3x PCIe (8/6 կապում) 750 մմ, SATA 4x860 մմ, SATA 4x760 մմ Կցված է 002fb679.rar
29	30237136/1	Ձայնային քարտ	Audigy, Creative Labs, FX5.1, Creative	Տեխնիկական պայմաններ Ազդանշան-աղմուկ հարաբերակցությունը (SNR) - 106 դԲ Պլատֆորմ - PC - PCI-e x1 Միացման ընտրանքներ (հիմնական) - ականջակալներ / առջևից դուրս. 1 x 3.5 մմ խցիկ - Հետևի ելք. 1 x 3.5 մմ խցիկ Կենտրոն/Սաբվուֆեր՝ 1 x 3,5 մմ խցիկ Միկրոֆոն Մուտք. 1 x 3,5 մմ խցիկ Line In: 1 x 3,5 մմ Jack Max Channel Output 5.1 Channels Աուդիո տեխնոլոգիաներ SBX Pro Studio Աջակցվող օպերացիոն համակարգեր Windows® 8, Windows Vista® SP1 կամ ավելի բարձր, Windows® 10, Windows® 7 Աուդիո հավատարմություն Մինչև 24 բիթ / 96 կՀց 1 տարվա սահմանափակ ապարատային երաշխիք Կցված է a16ed88e.rar
31	30237132/6	Մալուխ HDMI	PowerBear, PowerBear LLC, PB-HDMIC-01-USA, PowerBear	4K HDMI մալուխ. արականից արական HDMI մալուխը աջակցում է 4K տեսանյութ @ 60Hz, 2K, 1080P, 48 bit/px HDR գույնի խորություն, TrueHD 7.1, ձայնի վերադարձի ալիք (ARC) և Ethernet, պրեմիում որակի HDMI մալուխ. մալուխը պետք է ունենա 30WG պղնձե մետաղալար, եռակի թիթեղյա պաշտպանված կրկնակի հյուսված պրեմիում նեյլոնով՝ ոսկեզօծ կոռոզիոն դիմացկուն միակցիչներով՝ վերին մակարդակի երաշխավորված պատկերի և ձայնի համար Ամբողջական համատեղելիություն. Պետք է աջակցի գերարագ 18 Գբիտ/վրկ փոխանցում և հետընթաց համատեղելի է HDMI մալուխի ավելի վաղ տարբերակների հետ (1.3/1.4/2.0/2.0a) Երկարությունը 1.8 մ Կցված է 6100b3a7.rar
34	30237100/	Պինդ Մար	870 EVO,	SATA SSD, FORM FACTOR - 2,5 դյույմ INTERFACE - SATA 6 Գբ/վ

	6	մնային հի շողություն 3	Samsung group, MZ-77E250BW, Samsung	ինտերֆեյս, համատեղելի SATA 3 Գբ/վ և SATA 1,5 Գբ/վ ինտերֆեյսով ՉԱՓ (WxHxD) - 100 X 69.85 X 6.8 (մմ), ՔԱՇ Մոտ. 45.0գ, ՊԱՀՊԱՆՄԱՆ Հիշողություն Samsung V-NAND 3bit MLC ԿԱՐԳԱՎՈՐԻՉ - Samsung MKX Controller, CACHE MEMORY - Samsung 512 ՄԲ ցածր էներգիայի DDR4 SDRAM (500 ԳԲ) Հատուկ հատկություն - S.M.A.R.T SUPPORT , GC (GARBAGE COLLECTION) - Ավտո աղբի հավաքման ալգորիթմ ԿՈՂՐԱԳՐՄԱՆ ԱՋԱԿՑՈՒՄ – AES 256-բիթանոց գաղտնագրում (դաս 0), TCG/Opal, IEEE1667 (գաղտնագրված սկավառակ) WWN ԱՋԱԿՑՈՒՄ - ՍԱՐՔԻ ՔՆԻ ՌԵԺԻՄԻ ԱՋԱԿՑՈՒՄ Կատարողականություն - ՀԵՐԹԱԿԱՆ ԿԱՐԴԱՑՈՒՄ Մինչև 560 ՄԲ/վրկ ՀԵՐԹԱԿԱՆ ԳՐԵԼ - Մինչև 530 ՄԲ/վ, ՊԱՏԱՀԱԿԱՆ ԿԱՐԴԱՑՈՒՄ (4KB, QD32)3) 4) Մինչև 98,000 IOPS, Պատահական գրելու հնարավորություն (4KB, QD32) Մինչև 88,000 IOPS Պատահական ԸՆԹԵՐՑՈՒՄ (4KB, QD1) Մինչև 13000 IOPS Պատահական ԳՐԵԼ (4KB, QD1) Մինչև 36000 IOPS ՄԻՋԻՆ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՈՒՄԸ (ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐԴԱԿԻՑ) Միջինը՝ 2,2 Վտ Առավելագույնը՝ 3,5 Վտ (Պայթյունային ռեժիմ) ԷՆԵՐԳԱՍՊԱՌՈՒՄ (ԱՋԳԱՅԻՆ) 500 ԳԲ՝ մաքս. 30 մՎտ ԹՈՒՅԼԱՏԻՐ ԼԱՐՄ 5V ± 5% Թույլատրելի լարում ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ (MTBF) 1,5 միլիոն ժամ Հուսալիություն ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ջերմաստիճանը 0 - 70 ՇՈԿ 1500 Գ & 0,5 ms (Կես սինուս) Կցված է 89a134cc.rar
37	30237100/9	Պրոցեսորի հովացուցիչ 2	Hyper 212 EVO, Cooler Master Technology Inc., RR-212E-16PK-R1, Cooler Master	CPU SOCKET LGA2066, LGA2011-v3, LGA2011, LGA1366, LGA1200, LGA1156, LGA1155, LGA1151, LGA1150, AM4, AM3+, AM3, AM2+, AM2, MM2, F20X1, AM2, F20X1, AM2, F20X1, AM2, F20X1, AM2, F20X1, AM2, F20X1, AM2, F20X1, AM2, F20X1, AM2, F20X1, AM2, F20X1, AM2, F20X1, F20X1, AM2, F20X1, AM2, F20X1, F20X1 Լվացարանի ՉԱՓԵՐԸ (LXWXH) - 116 x 51 x 159 մմ HEAT SINK ՆՅՈՒԹ - ալյումինե լողակներ, 4 ուղղակի շփման ջերմային խողովակներ, HEAT INNK WEIGHT - 465g , HEAT PIPE DIMENSIONS - Ø6mm XWSAN

				X2X1, FAN X1X1 Արագություն - 600-2000 RPM (PWM) ± 10%, 600-1600 RPM (PWM) ± 10% (ԵՍ տարբերակ), օդափոխիչի օդափոխիչ - 24,9 - 82,9 CFM ± 10%, 24,9 – 66,3 պտույտ/րոպե (PWM) ± 66,3 CFM տարբերակ , օդափոխիչի օդի ճնշումը - 0.3 - 2.7 mmH2O ± 10%, 0.3 - 1.7 mmH2O ± 10% (ԵՄ տարբերակ) Օդափոխիչի կյանքի ակնկալիքը - 40,000 ժամ, օդափոխիչի աղմուկի մակարդակը - 9 - 36 դԲԱ, 9 - 31 դԲԱ (ԵՄ տարբերակ), օդափոխիչի տիպը - երկարատև թևային առանցքակալ, միակցիչ - 4-փին, օդափոխիչ - 200000 0.22A, 0.19A (ԵՍ Տարբերակ) Օդափոխիչի էներգիայի սպառումը - 2.64W, 2.28W (ԵՍ տարբերակ), օդափոխիչի քաշը - 104g / 0.23lb, ՍԱՌՈՒՑԻ ՏԵՍԱԿԸ - Օդային հովացուցիչ, ՍԵՐԻԱ - Hyper, ՀԵԱՏԻՊԵՐ - 4 Կցված է 9566ffd6.rar
39	30237137/1	Տեսաքարտ	Asus, ASUSTek Computer Inc., GT1030-SL-2G, Asus	Բազային ժամացույց՝ 1290 ՄՀց, ուժեղացման ժամացույց՝ 1544 ՄՀց Հիշողության ժամացույց՝ 6008 ՄՀց Արդյունավետ, CUDA միջուկներ՝ 384, ավտոբուսի տեսակ՝ PCIe 3.0, Հիշողության մանրամասն՝ 2048 ՄԲ GDDR5 Հիշողության արագություն՝ Bimory. 48,06 ԳԲ/վ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Պասիվ սառեցում (առանց հովացուցիչի), PCI Express 3.0 HDMI 2.0b և Single-Link DVI, Ցածր պրոֆիլի պատրաստ կառուցված EVGA Precision XOC-ի համար, առավելագույն թվային լուծաչափ՝ 3840x2160 (60GPU30Hz), NVIL30Hz բաց: Աջակցություն, Microsoft DirectX 12 API, Vulkan API, NVIDIA GameWorks տեխնոլոգիա, RESOLUTION & REFRESH, Max մոնիտորներ Աջակցված՝ 2 Max թվային՝ 3840x2160, ՊԱՀԱՆՁՆԵՐ 300 Վտ կամ ավելի մեծ էներգիայի մատակարարում: PCI Express, PCI Express 2.0 կամ PCI Express 3.0 համապատասխան մայր տախտակ մեկ գրաֆիկական բնիկով: Windows 10 32/64bit, Windows 8 32/64bit, Windows 7 32/64bit, ՉԱՓԵՐԸ Բարձրությունը՝ 2.71 դյույմ - 68.8

				մմ, Երկարությունը՝ 6.625 դյույմ - 169 մմ Լայնությունը՝ Կրկնակի բնիկ Կցված է 4a1596af.rar
50	30236110/1	Օպերատիվ հիշողություն	Fury Beast, Kingston Technology Corporation, KF342C16BB1AK2/32, Kingston	32 ԳԲ (16 ԳԲ 2G x 64-բիթ x 2 հատ) DDR4 3200 CL16 288 Pi DIMM հավաքածու CL(IDD) 17 ցիկլ, տողերի ցիկլի ժամանակ (tRCmin) 45,75 ns(min.), Թարմացնել մինչև ակտիվ/թարմացնել, հրամանի ժամանակը (tRFCmin) 350 վս (րոպ.), Շարքի ակտիվ ժամանակը (tRASmin) 32 վրկ (րոպե), UL վարկանիշը 94 V - 0, աշխատանքային ջերմաստիճանը 0o C-ից +85o C Պահպանման ջերմաստիճանը-55oC-ից +100oC, Էլեկտրամատակարարում. VDD = 1.2V Typical, VDDQ = 1.2V Typical, VPP = 2.5V Տիպիկ, VDDSPD = 2.2V-ից 3.6V, On-Die (ODT), 16 ներքին բանկ; 4 խումբ 4 բանկերից յուրաքանչյուրը, երկկողմանի դիֆերենցիալ տվյալների ստրոբ 8-բիթանոց նախնական բեռնում, պայթյունի երկարության (BL) անջատիչ BL8 կամ BC4 (Burst Chop), Բարձրությունը 1,3425” (34,1 մմ), ջերմատախտակով Կանխադրված (JEDEC)՝ DDR4-2400 CL17-17-17 @1.2V, XMP պրոֆիլ #1՝ DDR4-3200 CL16-20-20 @1.35V, XMP պրոֆիլ #2՝ DDR4-3000 CL16-19-19 @1.35V, Կցված է ce8bc27e.rar

* Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

ԳՆՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Նորք, Գ. Հովսեփյան փ.26
Արդշինբանկ ՓԲԸ
2470102796740000
01540062
Հովհաննես Մովսիսյան

ՎԱՃԱՌՈՂ
Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, 0009, Աբովյան փ. 29շ. թիվ 3 տարածք
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ
25000-10152710100
01570457
Սերգեյ Աղագումյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by MOVSISYAN HOVHANNES 2714920608
Date: 2022.03.14 15:48:22 AMT

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by AGHAGUMYAN SERGEY 2514800153
Date: 2022.03.14 11:13:07 AMT

Հավելված N 2
____/_____/2022թ. կնքված
ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/15 ծածկագրով պայմանագրի

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
					հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
2	հատ	29200.00	438000.00	15	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	15	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
3	հատ	84600.00	423000.00	5	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	5	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
4	հատ	69900.00	69900.00	1	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	1	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
8	հատ	68880.00	688800.00	10	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	10	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
9	հատ	44400.00	444000.00	10	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	10	Պայմանագիրը ստորագրելուց հետո

							30 օրվա ընթացքում
11	հատ	64980.00	324900.00	5	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	5	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
14	հատ	85500.00	1368000.00	16	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	16	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
15	հատ	28920.00	578400.00	20	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	20	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
16	հատ	142800.00	142800.00	1	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	1	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
19	հատ	31980.00	31980.00	1	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	1	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
21	հատ	7008.00	350400.00	50	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	50	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
23	հատ	12720.00	63600.00	5	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	5	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
24	հատ	11720.00	351600.00	30	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	30	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
25	հատ	64980.00	649800.00	10	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	10	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
27	հատ	111600.00	558000.00	5	ք. Երևան, Գ.	5	Պայմանագիրը

					Հովսեփյան 26		ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
29	հատ	35000.00	105000.00	3	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	3	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
31	հատ	8160.00	163200.00	20	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	20	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
34	հատ	33000.00	660000.00	20	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	20	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
37	հատ	22320.00	111600.00	5	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	5	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
39	հատ	64980.00	454860.00	7	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	7	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում
50	հատ	105000.00	630000.00	6	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	6	Պայմանագիրը ստորագրելուց հետո 30 օրվա ընթացքում

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ **ՎԱՃԱՌՈՂ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Հասցե՝ ք.Երևան, Նորք, Գ. Հովսեփյան փ.26

Արդշինբանկ ՓԲԸ

2470102796740000

01540062

Հովհաննես Մովսիսյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by MOVSISYAN HOVHANNES
2714920608
Date: 2022.03.14 15:48:44 AMT

Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, 0009, Աբովյան փ. 29շ. թիվ 3 տարածք

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ

25000-10152710100

01570457

Սերգեյ Աղագումյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by AGHAGUMYAN SERGEY
2514800153
Date: 2022.03.14 11:13:23 AMT

Հավելված N 3
____/_____/2022թ. կնքված
ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/15 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			Հնվ.	Փտր.	Մրտ.	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգս.	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.	Ընդամենը
2	30234660/1	Flash Կուտակիչ				438000.00	438000.00	438000.00	438000.00	438000.00	438000.00	438000.00	438000.00	438000.00	438000.00
3	30237200/2	KVM Extender				423000.00	423000.00	423000.00	423000.00	423000.00	423000.00	423000.00	423000.00	423000.00	423000.00
4	30237200/3	KVM Սվիթչ				69900.00	69900.00	69900.00	69900.00	69900.00	69900.00	69900.00	69900.00	69900.00	69900.00
8	30232480/3	Արտաքին կոշտ սկավառակ 2				688800.00	688800.00	688800.00	688800.00	688800.00	688800.00	688800.00	688800.00	688800.00	688800.00

9	30232480/4	Արտաքին կոշտ սկավառակ 3				44400 0.00	44400 0.00	44400 0.00	44400 0.00	44400 0.00	44400 0.00	44400 0.00	44400 0.00	44400 0.00	44400 0.00
11	30192320/1	Ժապավեն				32490 0.00	32490 0.00	32490 0.00	32490 0.00	32490 0.00	32490 0.00	32490 0.00	32490 0.00	32490 0.00	32490 0.00
14	30232231/2	Կոշտ սկավառակ 2				13680 00.00	13680 00.00	13680 00.00	13680 00.00	13680 00.00	13680 00.00	13680 00.00	13680 00.00	13680 00.00	13680 00.00
15	30232231/3	Կոշտ սկավառակ 3				57840 0.00	57840 0.00	57840 0.00	57840 0.00	57840 0.00	57840 0.00	57840 0.00	57840 0.00	57840 0.00	57840 0.00
16	30232231/4	Կոշտ սկավառակ 4				14280 0.00	14280 0.00	14280 0.00	14280 0.00	14280 0.00	14280 0.00	14280 0.00	14280 0.00	14280 0.00	14280 0.00
19	30232231/7	Կոշտ սկավառակների հարակցման կայան 2				31980.00	31980.00	31980.00	31980.00	31980.00	31980.00	31980.00	31980.00	31980.00	31980.00
21	30237411/1	Համակարգչային մկնիկ և ստեղնաշար				35040 0.00	35040 0.00	35040 0.00	35040 0.00	35040 0.00	35040 0.00	35040 0.00	35040 0.00	35040 0.00	35040 0.00
23	32341120/1	Համակարգչի ակաջակալ 1				63600.00	63600.00	63600.00	63600.00	63600.00	63600.00	63600.00	63600.00	63600.00	63600.00
24	32341120/2	Համակարգչի ակաջակալ 2				35160 0.00	35160 0.00	35160 0.00	35160 0.00	35160 0.00	35160 0.00	35160 0.00	35160 0.00	35160 0.00	35160 0.00
25	32341110/1	Համակարգչի Բարձրախոս				64980 0.00	64980 0.00	64980 0.00	64980 0.00	64980 0.00	64980 0.00	64980 0.00	64980 0.00	64980 0.00	64980 0.00
27	30237112/1	Հոսանքի				55800	55800	55800	55800	55800	55800	55800	55800	55800	55800

		Սնուցման բլոկ				0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
29	30237136/1	Ձայնային քարտ				105000.00	105000.00	105000.00	105000.00	105000.00	105000.00	105000.00	105000.00	105000.00	105000.00
31	30237132/6	Մալուխ HDMI				163200.00	163200.00	163200.00	163200.00	163200.00	163200.00	163200.00	163200.00	163200.00	163200.00
34	30237100/6	Պինդ Մարմնային հիշողություն 3				660000.00	660000.00	660000.00	660000.00	660000.00	660000.00	660000.00	660000.00	660000.00	660000.00
37	30237100/9	Պրոցեսորի հովացուցիչ 2				111600.00	111600.00	111600.00	111600.00	111600.00	111600.00	111600.00	111600.00	111600.00	111600.00
39	30237137/1	Տեսաքարտ				454860.00	454860.00	454860.00	454860.00	454860.00	454860.00	454860.00	454860.00	454860.00	454860.00
50	30236110/1	Օպերատիվ հիշողություն				630000.00	630000.00	630000.00	630000.00	630000.00	630000.00	630000.00	630000.00	630000.00	630000.00

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Հասցե՝ ք.Երևան, Նորք, Գ. Հովսեփյան փ.26

Արդշինբանկ ՓԲԸ

2470102796740000

01540062

Հովհաննես Մովսիսյան

Digitally signed by MOVSISYAN HOVHANNES 2714920608
Date: 2022.03.14 15:49:00 AMT

ՎԱՃԱՌՈՂ

Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, 0009, Աբովյան փ. 29շ. թիվ 3 տարածք

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ

25000-10152710100

01570457

Սերգեյ Աղագումյան

Digitally signed by AGHAGUMYAN SERGEY 2514800153
Date: 2022.03.14 11:13:36 AMT

_____
/ստորագրություն/
Կ.Տ

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 4
____/_____/2022թ. կնքված
ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/15 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20__թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/15-1
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 20___թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
2	Flash Կուտակիչ							

3	KVM Extender							
4	KVM Սվիթչ							
8	Արտաքին կոշտ սկավառակ 2							
9	Արտաքին կոշտ սկավառակ 3							
11	Ժապավեն							
14	Կոշտ սկավառակ 2							
15	Կոշտ սկավառակ 3							
16	Կոշտ սկավառակ 4							
19	Կոշտ սկավառակների հարակցման կայան 2							
21	Համակարգչային մկնիկ և ստեղնաշար							
23	Համակարգչի ակաջակալ 1							
24	Համակարգչի ակաջակալ 2							
25	Համակարգչի Բարձրախոս							
27	Հոսանքի Սնուցման բլոկ							
29	Ձայնային քարտ							
31	Մալուխ HDMI							
34	Պինդ Մարմնային հիշողություն 3							
37	Պրոցեսորի հովացուցիչ 2							
39	Տեսաքարտ							
50	Օպերատիվ հիշողություն							

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության

բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	**Ապրանքը ընդունեց**
_____	_____
ստորագրություն	**ստորագրություն**
_____	_____
ազգանուն, անուն	**ազգանուն, անուն**
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված N 4.1
____/_____/2022թ. կնքված
ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/15 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ -ի (այսուհետ՝ Գնորդ) և Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ._____ -ին կնքված N ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/15-1 պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով

Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
Flash Կուտակիչ	հատ	
KVM Extender	հատ	
KVM Սվիթչ	հատ	
Արտաքին կոշտ սկավառակ 2	հատ	
Արտաքին կոշտ սկավառակ 3	հատ	
Ժապավեն	հատ	
Կոշտ սկավառակ 2	հատ	
Կոշտ սկավառակ 3	հատ	
Կոշտ սկավառակ 4	հատ	
Կոշտ սկավառակների հարակցման կայան 2	հատ	
Համակարգչային մկնիկ և ստեղնաշար	հատ	
Համակարգչի ակաջակալ 1	հատ	
Համակարգչի ակաջակալ 2	հատ	
Համակարգչի Բարձրախոս	հատ	
Հոսանքի Սնուցման բլոկ	հատ	
Ձայնային քարտ	հատ	
Մալուխ HDMI	հատ	
Պինդ Մարմնային հիշողություն 3	հատ	
Պրոցեսորի հովացուցիչ 2	հատ	
Տեսաքարտ	հատ	
Օպերատիվ հիշողություն	հատ	

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն